

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2014թ. ապրիլի 17-ինիստի**

Խորհրդի 32 անդամներից ներկայեցին 27-ը: Նախագահում էր խորհրդին նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդին նախագահը քվեարկության ներկայացրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

- 1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին նախագիծ (զեկ. ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահ, իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Գ. Հարությունյան):*
- 2. Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրություն:*
- 3. Սահմանադրական ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գ. Դանիելյան):*
- 4. Ընթացիկ հարցեր:*

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին նախագիծ (զեկ. ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահ, իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Գ. Գազիկ Հարությունյան):

Օրակարգային նշված հարցը քննարկվեց գիտական խորհրդի ընդլայնված կազմով՝ ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում: Քննարկմանը մասնակցեցին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, ասպիրանտներ, հայցորդներ, մագիստրանտներ և ուսանողներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը նշեց, որ հայեցակարգը բազմիցս փոփոխությունների ենթարկվել է և որպես նախագիծ՝ նմանաբնույթ քննարկումներից հետո դեռևս կարող է կրկին փոփոխությունների ենթարկվել:

Գ. Հարությունյանը նախ անդրադարձավ նախագծի անհրաժեշտության և կարևորության հարցին՝ համեմատական վերլուծություններ անցկացնելով աշխարհի այլ պետությունների սահմանադրությունների և նորանցում կատարված փոփոխությունների պարբերականության հետ:

Բանախոսն առանձնացրեց Հասիման աղրական զարգացումների կուփուլ: Առաջին (1995-2005 թթ.) փուլը, երբ ՀՀ Սահմանադրությունն էական դեր ունեցավ Հայաստանում ժողովրդավարության հաստատման, իրավական պետության հիմքերի ամրապնդման, ճգնաժամային իրավիճակներում սահմանադրական ճանապարհով լուծումներ գտնելու, պետական իշխանության ինստիտուտներին աստիճանական կայացման, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ ամրապնդելու գործում:

Երկրորդ փուլը դիտարկվում է 2005 թվականից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունում 2005 թ.-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում իրականացված սահմանադրական բարեփոխումները, համակարգային լուծումների առումով միջարքի արցերում առաջընթաց գրանցելով հանդերձ, բովանդակեցին նաև միջարք կիսալուծումներ, որոնք ներկայումս հաղթահարելու և համակարգային մոտեցումներն ամբողջականացնելու անհրաժեշտություն ունեն:

Այնուհետև հանձնաժողովին ախազահը ներկայացրեց հայեցակարգում տեղ գտած սահմանադրական զարգացումների հիմքում դրվող հիմնական տղողությունները՝ իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը, ապահովումն ու իրացումը սահմանադրական լուծումներում, իրավական պետության սահմանադրաիրավական և նախադրյալների ամրապնդումը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և զատությունների անմիջական գործողության ամրապնդումը, իրավունքների սահմանափակման սահմանադրական լուծումները, սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքները, հանրաքվեի սահմանադրական երաշխիքները, ինչպես նաև ներտրական իրավունքի և ներտրական համակարգի, իշխանությունների բաժանման և հավասարակշռման, դատական իշխանության զարգացման հնարավոր միտումներին առնչվող հիմնադրությունները:

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և զատությունները պետության կողմից ճանաչվելով և պարտավորվելով պաշտպանվելու և պարտավորվելով իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորելն իրավունքով իշխանության սահմանափակումը:

Սահմանադրական նորմերը չմիայն պետք է հոչակեն մարդու սահմանադրական իրավունքները, այլ նաև պետք է լազույն սահտակ սահմանեն նրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները,

առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է խեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համաչափ, չաղավաղ են իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, զուգակցվեն պետության համար ժեք պարտականություններով», - ընդգծեց Գ. Հարությունյանը:

Գ. Հարությունյանին հարցեր ուղղեցին ֆակուլտետի դասախոսական կազմի ներկայացուցիչներ Վ. Օհանյանը, Հ. Ենգոյանը, Գ. Պետրոսյանը, Ա. Ղազինյանը, Է. Շաթիրյանը, ինչպես նաև Ս. Թևանյանը:

Մինչև հարցերին պատասխանելը, Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին ախազահը նշեց, որ հայեցակարգում առաջադրված են կոնկրետ տխի դիրներ, որոշակի ացված սկզբունքներ և կոնկրետ տղողություններ խնդիրներ իլուծման համար, իսկ արդեն կոնկրետ լուծումները կշարադրվեն բարեփոխումների փաթեթում:

«Մենք միշտ քրքրվում ենք մաքսիստական շոտլանդիկներին քառաջաշաշել, մոտեցումներ մշակել և կորանցում մանրամասն արտարքեր կներառաջարկել: Սակայն պետք է նշել, որոշ բոլոր շոտլանդիկներին ենք անդրադարձել կոնկրետ հարցեր կան, որոնք հանրային քննարկումներ ինքնազբուսման արժանի են, որից հետո համապատասխան լուծումներ կմշակենք», - նշեց Գ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ իտեղի համար հայտարարված մրցույթի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ս. Դիրանդյանը հայտնեց, որ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ պաշտոնի տեղակալ մասնաճյուղի նմանակցելու համար դիմել է նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր Արա Գաբուզյանը:

Մրցույթային հանձնաժողովի նախագահը ներկայաներին ծանոթացրեց թեկնածուի հանձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածուության վերաբերյալ Քրեական իրավունքի ամբիոնի նախկին ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ. Ղազինյանը, որն իրաջակցությունը հայտնեց Ա. Գաբուզյանի թեկնածությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ պաշտոնի համար Ա. Գաբուզյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ, Նախագահողի առաջարկով՝ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վ. Այվազյան (նախագահ), Ս. Մեղրյան, Ս. Վարդանյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստի ներկայացնողները 32 անդամներից 27-ը, որոնք բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Ա. Գաբուզյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 25 անդամ, դեմ՝ 0, 2 քվեաթերթի կճանաչվել է անվավեր:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.

հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արա Գաբուզյանին համարել ընտրված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ պաշտոնում:

3. ԼՍԵՑԻՆ. Մահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ 2013-2014թթ. ուսումնական տարում

կատարածուսումնամեթոդականնգիտահետազոտականաշխատանքներինասին (զեկ.՝ ամբիոնիվարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղանիեյան):

Զեկուցողը համակարգված տեսքով ներկայացրեց տեղեկատվություն ամբիոնի կողմից կատարված ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ ուսումնական ծրագրերի, մեթոդական աշխատանքի, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների, այդ թվում՝ գիտական հրապարակումների, մենագրությունների, հոդվածների, գիտաժողովներին ամբիոնի անդամների մասնակցության վերաբերյալ:

Անդրադարձ կատարվեց ամբիոնի՝ գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ կատարված, արտահամալսարանական, ինչպես նաև ուսանողության հետ տարվող աշխատանքներին և այլ հարցերի:

Զեկուցողն անդրադարձավ նաև ամբիոնի աշխատանքում տեղ գտած թերություններին, առկա խնդիրներին և դրանց լուծման ու բարելավման ուղիներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Տ. Բարսեղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը գնահատելով:
Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

4.1. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Աստղիկ Համլետի Մատինյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Ն. Այվազյանը, Է. Շաթիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի հայցորդ Աստղիկ Մատինյանի՝ «Խորհրդարանական փոքրամասնության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ-ում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ. Այվազյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.2. ԼՄԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Ծովինար Յուրիկի Ավետիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Վ. Այվազյանը, Գ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի հայցորդ Ծովինար Ավետիսյանի՝ «Բանկային գործունեության ոլորտում վարչարարություն առանձնահատկությունները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ.Գիտականղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Է. Շաթիրյանին:

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.3. ԼՄԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սուրիկի Հակոբյանիատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Գ. Ղազինյանը, Ա. Վաղարշյանը, Է. Շաթիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի հայցորդ Ռուզաննա Հակոբյանի՝ «Իրավաբանական ֆիկցիան վարչաիրավական բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ.Գիտականղեկավար հաստատել ի.գ.դ.,պրոֆ. Գ. Դանիելյանին:

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.4. ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Աշխեն Մանվելի Սողոմոնյանիատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Գ. Ղազինյանը, Ս. Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի հայցորդ Աշխեն Սողոմոնյանի՝ «Տնտեսական ընկերությունների դադարման իրավական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ. Ավետիսյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.5. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ղոցենտ, իրավ. գիտ. թեկ. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին ԺԲ.00.06- «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Հ. Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվառնելով Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանն ունի 20-ից ավելի հրատարակված գիտական աշխատանքներ ղիմել ԵՊՀ ռեկտորատին՝ միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ղոցենտ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին ղեկավարել ամբիոնի հայցորդ Քնարիկ Վարդանյանի՝ «Փախստականների պաշտպանության միջազգային-իրավական ակտերը և դրանց իրագործումը ՀՀ-ում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ:

4.6. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ղոցենտ, իրավ. գիտ. թեկ. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին ԺԲ.00.06- «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Դանիելյանը, Ա. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվառնելով Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանն ունի 20-ից ավելի հրատարակված գիտական աշխատանքներ ղիմել ԵՊՀ ռեկտորատին՝ միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ղոցենտ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին ղեկավարել ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Զինավոր

Մեղրյանի՝ «Ժողովուրդների ինքնորոշման արդի հիմնահարցերը միջազգային իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ:

Խորհրդինսագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Է. Շաթիրյան